«Լույսեր» ՓԲԸ –ի խորհրդի 23.11.2021թ. –ի

որոշման համաձայն

Թողարկման պայմաններ

23 նոյեմբեր, 2021թ.

Լույսեր ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ազդագիրը (գրանցված է ՀՀ Կենտրոնական բանկ նախագահի 05/11/2021թ –ի

N 1/576Ա որոշմամբ) և սույն թողարկման վերջնական պայմանները:

Ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ-ում՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 39 հասցեում և Լույսեր ՓԲԸ-ում՝ ՀՀ, ք. Երևան 0031, Լենինգրադյան 31 բն. 12 հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ		
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը)	«Լույսեր» ՓԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր
3.	Սերիան (տվյալ ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	Սերիա 2, 2021
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	1 500 000 ԱՄՆ դոլար
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Պարտատոմսերը ստորադաս չեն: Թողարկողի լուծարման դեպքում Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են հինգերորդ հերթին: Հերթականության մանրամասները ներկայացված են Ազդագրի 2.3.6. կետում: Ազդագրին կարելի է ծանոթանալ «Լույսեր» ՓԲԸ-ի կայքում՝ www.luyser.am :
6.	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար

7.	Առաջարկի գինը	Պարտատոմսի գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց որոշվելու է հետևյալ բանաձևով. $$P = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\left[\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}}\right] + \left[\frac{A}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}\right]$$ $$\tau = \frac{DSN}{DCC}$$ որտեղ՝ **DSN** - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի/անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած փաստացի օրերի քանակն է: **DCC** - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրը եղած փաստացի օրերի քանակն է: **P** - պարտատոմսի գինն է: **f** - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=2 կիսամյակային վճարումների դեպքում): **N** - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է: **Y** - պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունն է: **C** - տարեկան արժեկտրոնի չափն է: **A** - պարտատոմսի անվանական արժեքն է: **i** - արժեկտրոնի տվյալ հերթական համարն է, որը փոփոխվում է տվյալ պահից մինչև վերջնական մարում մնացած արժեկտրոնների վճարումների քանակից կախված, ընդ որում i արժեքը փոփոխվում է ըստ աճման և ընդունում է 1-ից մինչև N արժեքները (երբ N-ը ընդունում է 1 արժեք, i -ն նույնպես ընդունում է 1 արժեք): Օրերի հաշվարկման պայմանականությունն է՝ փաստացի/փաստացի. **DCC**=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 – D1M1Y1 **DSN**=Օրերի փաստացի քանակը, D3M3Y3 – D2M2Y2 որտեղ՝ **D1M1Y1** - գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի

		մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է, **D2M2Y2** - գործարքի կատարման ամսաթիվն է, **D3M3Y3** - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է: Տեղաբաշխման ժամկետի ընթացքում թողարկվող պարտատոմսերի գները Տեղաբաշխումը սկսելուց առաջ լրացուցիչ կհրապարակվեն Թողարկողի և/կամ Տեղաբաշխողի ինտերնետային կայքերում:
8.	Անվանական արժեքը	1000 (հազար) ԱՄՆ դոլար
9.	Քանակը	1 500 (մեկ հազար հինգ հարյուր) հատ
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	06 դեկտեմբեր, 2021
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	16 դեկտեմբեր, 2021
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	AMLUYSB22ER1
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«Լույսեր» ՓԲԸ-ի խորհրդի որոշմամբ
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	06 դեկտեմբեր, 2021
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	7% (յոթ տոկոս) անվանական տոկոսադրույք և կիսամյակային վճարման պարբերականությամբ տեղաբաշխման սկզբից:
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	06.06.2022, 06.12.2022, 06.06.2023, 06.12.2023, 06.06.2024, 06.12.2024 Արժեկտրոնները պարտատոմսերի սեփականատերերին վճարվելու (մարվելու) են արժեկտրոնների հաշվարկման օրը, իսկ անվանատիրոջը կամ վերջինիս հաշվում առկա

		ներդրողներին՝ հաշվարկման օրվանից հետո առավելագույնը 6 (վեց) աշխատանքային օրվա ընթացքում: Եթե հաշվարկման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման (մարման) օր է համարվում դրան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ոչ կիրառելի
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	ոչ կիրառելի
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչակտրոնային) արժեթղթերի վերաբերյալ դրույք (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ		
21.	Մարման ժամկետը	06 դեկտեմբեր, 2024
22.	Մարման արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	1 000 (հազար) ԱՄՆ դոլար անվանական արժեքով
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փութ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		

26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«ԱՐՄԲՐՈԿ» ԲԲԸ ՀՀ, ք. Երևան, Հանրապետության 39
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է տեղաբաշխող ԱՐՄԲՐՈԿ ԲԲԸ-ի կողմից իր գտնվելու վայրում՝ ք. Երևան, Հանրապետության 39: Նախատեսվում է իրականացնել չերաշխավորված տեղաբաշխում՝ համաձայն 02/09/2021թ.-ին կնքված N21/010 Արժեթղթերի տեղաբաշխման պայմանագրի:
Այլ տեղեկություններ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում էհամապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հարցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու և առևտրի թույլտվություն ստանալու համար, և համաձայն ՀՀ գործող օրենսդրության պարտատոսմերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում (բացառությամբ անհատույց գործարքների): Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲ ընկերությունը: Բորսայում պարտատոմսերի ցուցակման և առևտրի թույլտվության հայտի մերժման դեպքում, տեղաբաշխումը համարվելու է չեղյալ, և գումարները հետ են վերադարձվելու ներդրողներին:
30.	Արժեթղթի վարկանիշը	արժեթղթերի վարկանշված չեն
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Մանրամասները ներկայացված են Ազդագրի 2.4.1. կետում: Պարտատոմսեր ձեռք բերելու նպատակով ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները և պատշաճ կերպով դրանք ներկայացնեն տեղաբաշխողին: Դրանով նրանք կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը, որով էլ այդ

		պայմանները պարտադիր կդառնան ներդրողների համար: Պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը լրացնելուց և պատշաճ կերպով ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պետք է թողարկման նպատակով ստորև ներկայացված բանկերից մեկում բացված Տեղաբաշխողի հաշվեհամարներից որևէ մեկին կատարի պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի վճարում՝ դրամական միջոցների մեծության հաշվարկային բանաձևի համաձայն. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ - 2500000122610101 «ԱյԴի Բանկ» ՓԲԸ - 11817000030101 «Էյչ Էս Բի Սի բանկ Հայաստան» ՓԲԸ - 217004089991102 «Էվոկա Բանկ» ՓԲԸ - 1660000928160201 Թողարկման նպատակով Հաշվին դրամական միջոցները ստանալուց անմիջապես հետո Թողարկողի թողարկման հաշվից համապատասխան քանակի պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար Տեղաբաշխողը Դեպոզիտարիային է ներկայացնում պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր: Այն գումարները, որոնք թողարկողման նպատակով բացված հաշվեհամարին ստացվել են պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո, ենթակա են ետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարակաները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Տեղաբաշխողի կողմից ստացման ժամկետից: Պարտատոմսերի ձեռքբերման հայտ--հանձնարարականը համարվում է պատշաճ կերպով առաքված Տեղաբաշխողին, եթե այն առաքվել է Տեղաբաշխողի հետ միայն ներքոնշյալ կապի միջոցներից որևէ մեկով կամ

		առձեռն՝ Տեղաբաշխողին այցելելով և առկա է հասցեատիրոջ կողմից առաքման ստացման հաստատում: Տեղաբաշխողի հետ կապի միջոցներն են՝ • Հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0010, Հանրապետության 39, • Էլեկտրոնային փոստ՝ armenbrok@armenbrok.com, ib@armenbrok.com, • Հեռ.՝ +37411 590000, • Սի Բի Էյ Նեթ՝ Armenbrok OJSC/CBANet: Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի Հավելված 1-ում: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է Ազդագրի Հավելված 2-ում: Պարտատոմսեր ձեռք բերել ցանկացող անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ: Ֆիզիկական և/ կամ իրավաբանական անձինք պարտատոմսերի ձեռքբերման համար լրացնում են հայտ-հանձնարարականում նշված դաշտերը, որոնց լրացումը պարտադիր է հայտի վավերականությունն ապահովելու համար: Հայտում նշված «Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարված ընդհանուր գումարը» դաշտում պետք է նշվի «Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ» դաշտում ամրագրված թվի և «Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը» դաշտում ամրագրված թվի արտադրյալը: Անվավեր են ճանաչվում և տեղաբաշխմանը չեն մասնակցում այն ներդրողների հայտ-հանձնարարականները, ովքեր հայտի

		ներկայացումից հետո սահմանված ժամկետում չեն կատարել համապատասխան վճարումը: Բացառությամբ վերը ներկայացված դեպքերից հայտերը չեն կարող հետ կանչվել ներդրողների կողմից դրանք պատշաճ կերպով առաքելուց, Տեղաբաշխողի կողմից դրանց ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և հապատասխան վճարումը կատարելուց հետո: Պարտատոմսերի ձեռքբերման քանակական և գումարային սահմանափակումներ չկան: Իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք Թողարկողի պարտատոմսերի ձեռքբերման դիմաց վճարումները պետք է կատարեն թողարկման նպատակով Տեղաբաշխողի կողմից բացված հաշվեհամարներին, որոնք նշված են Ազդագրի 2.4.1.3 կետում: Պարտատոսմերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները բավարարվելուց և բավարարման մասին տեղեկացվելուց հետո ներդրողները կարող են ստանալ արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից:

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Խաչիկ Սահակյան	Բաժնետեր, Խորհրդի անդամ		23.11.2021
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Հրանուշ Աղայան	Բաժնետեր, Խորհրդի անդամ		23.11.2021.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Սարգիս Իսրայելյան	Բաժնետեր, Խորհրդի անդամ		23.11.2021
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դավիթ Մարգարյան	Բաժնետեր, Խորհրդի անդամ		23.11.2021
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գրիգոր Չիչոյան	Գործադիր տնօրեն		23.11.2021թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արամ Տիտանյան	*Գլխավոր հաշվապահ*		23.11.2021թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում եմ՝

Գրիգոր Չիչոյան	**Գործադիր տնօրեն**		23.11.2021թ.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)